


ԽՄԲԱԳՐԱԿԱՆԿՈՉ ԱՂՕԹԻ

Յիսուս Քրիստոսի եկեղեցին՝ այսօր աւելի քան երբէք՝ անհրաժեշտ պէտքը կ'զգայ միացեալ աղօթքի հրաւերի մը։

Թէ՛ քաղաքական և թէ՛ եկեղեցական տեսակետներէ՝ խաղաղութեան և միութեան պէտքը երբէք այսչափ զգալի եղած չէր։ Անհատները և եկեղեցիները իրարու մօտեցնելու համար կատարուած հաւաքոյթներուն և խորհրդակցական ժողովներուն թիւը միշտ կը բազմապատուի։ Բայց բոլոր այս մարդկային ջանքերը, թէպէտ անկիզմ և անչափախորի իրենց շարժառիթներուն մէջ, անօգուտ են, եթէ Աստուած ինքը անոնց ծրագիրներուն կեդրոնը չի գտնուիր։ Ան ի՞նչպէս կրնայ հոն ըլլալ, եթէ բոլոր Քրիստոնեաները իրենց լուսավոյն հոգեւոր ոյժերը չեն միացնիր։ Անոր ներկայութիւնը ապահովելու համար։

Մենք կը հաւատանք թէ բարի կամեցողութիւնը ոյժ մըն է, թէ սէրը շատ բաներ կրնայ ընել։ Բայց եկեղեցական պատմութիւնէն գիտենք որ բարեկամեցողութիւնը և սէրը ինքնին անարժէք են, եթէ Աստուած իր Ս. Հոգիովը չի ներշնչեր զանոնք։

Ուստի միանա՛նք մեր երկնային Հօրը ազգելու, որ Ան իր Ս. Հոգիովը այցելէ մեզ՝ մեր ջանքերուն յաջողութիւնը ապահովելու

համար։ Ամենէն աւելի խնդրենք Անկէ, որ եկեղեցիին փափաքը ըլլայ ընդհանուր հոգեւոր արթնութիւն մը յառաջ բերել, և անհատներու և եկեղեցիներու մէջ հոգեւոր կեանքը խորունկցնել։ Կազմակերպումի և մերձեցումի բոլոր ջանքերը ապարդիւն պիտի մընան, եթէ բոլոր ժողովուրդներու մէջ բարոյական և հոգեւոր վերարթնում մը յառաջ չի գար։

Երբ այսպէս աղօթելու համար միատեղ գտնա՛ք՝ մեր նպատակը Աստուծոյ կողմանէ զանուոյց զժկամակութեան մը յաղթիլ չէ, այլ միայն գործակցիլ իր պատրաստակամութեան և մեր խորհածէն և խնդրածէն զերազանցօրէն աւելին ընելու իր կարողութեան հետ։ Այս շաբաթը ո՛րչափ մեծ արդիւնքներով լեցուն պիտի ըլլար, եթէ մենք ոչ միայն Ս. Հոգւոյն լեցունութիւնը խնդրէինք և ընդունէինք, այլ նաեւ մեր հոգին, միտքն ու մարմինը Անոր կամքին և առաջնորդութեանը յանձնէինք, Քրիստոսի Աւետարանը ստրածելու մէջ մեզի վիճակած ոեւէ ծառայութիւնը կատարելու համար։

Աստուծոյ կ'աղօթենք որ Ան օրհնէ 1928 տարուան Տիեզերական Աղօթքի Շաբաթը։

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԵՏԱՐԱՆԱԿԱՆ
ԴՍՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

«ՄԵՐ ՄԱՏԱԴ ՍԵՐՈՒՆԴԸ»
ԿԱՄ «ՊԱՀՈՒԱԾ ԳԱՆՁԵՐԸ»

Վ. Հիւկօ անգամ մը ըսած է. «Տէր. վանդակը առանց բլբուլի՝ դարունը առանց վարդի և ընտանիքը առանց մանուկի մի՛ թողուր:» Այսօր ամէն մէկ անհատին փափաքն է ունենալ վանդակ մը իր բլբուլով, դարուն մը իր վարդով, և ընտանիք մը իր մանուկով: Բայց այս դարուն մէջ էական բանը միայն ունենալ չէ, այլ նաև ունեցածը կատարելագործել է: Վանդակ մ'ունիս բլբուլով, բայց չես կրնար երգել տալ. դարուն մ'ունիս վարդով, բայց չես կրնար բուրում մը արտադրել. ընտանիք մ'ունիս մանուկով, բայց չես կրնար կրթել: Այն ատեն ի՞նչ օգուտ կրնաս քաղել այն բլբուլէն, վարդէն, և մանուկէն:

Վերջապէս մարդը լաւ կ'ըմբռնէ, ինչ որ Սաղմոսեղոուն ժամանակին ըսած էր. «Մարդը քիչ մը վար ըրիր հրեշտակներէն»: Ան այս բարձր գաղափարականով կը նետուի կեանքի ասպարէզին մէջ, հնարելով միջոցներ մարդկութեան յառաջդիմութեան և բարձրացման համար:

Անցեալ դարերուն մէջ չէին գիտեր, թէ պատիկը ի՞նչ է, ան ի՞նչ ընելու է և ի՞նչ ըլլալու է: Բայց վերջապէս լուսաւորեալ դարը իր լոյսէն շողիլ մըն ալ նետեց այս անձանոթ մտայած նիւթին վրայ, և մարդկութիւնը հասկեցաւ թէ ի՞նչ է մանուկը:

Այլեւս մարդիկ չեն նայիր անոր որ ցորաւոր է, յաղթանդամ է, հարուստ է. հիմայ ոչ թէ մեծերը այլ պատիկները ուշադրութիւն կը գրաւեն: Աշխարհը կը յառաջդիմէ: Հին Սպարթացիներ ֆիզիքապէս տկար մանուկը ամայի տեղ մը կը թողուր վայրի անասուններէն բզբտուելու համար. բայց վերջապէս մարդիկ տեսան որ ծննդեան օրը 180 կրամ ջուր առնող գաւաթի մը մէջ մտնելու չափ տկար և պզտիկ նեւտոնը՝ ուղաղայի հանճարը կրնայ յայտնուիլ:

Չափահաս մարդ մը կրթել՝ անհատ մը կրթել է, իսկ մանուկ մը կրթել՝ ընտանիք մը, ցեղ մը կրթել է: Ամէրիկա Մօնթ-Լօւիսի վրայ կառուցուած մանուկներու ժողովատեղիին վրայ Տր. Լուիզ Բըլօփօսի կողմա-

նէ տապէս գրուած է. «Ես կը սիրեմ զԱստուած և մանուկները:» Տր. Բըլօփօս հասկըցած էր թէ մանուկներուն մօտ երթալով և զանոնք լաւ կը թեկով՝ ուղաղային պիտի ունենար նոր Ամէրիկա մը: Արդէն ի՞նչ որ արու Ուիկամ լաւ հասկցած էր թէ մանուկ մը ի՞նչ կրնար ընել իր հայրենիքին:

Բայց էական հարցը այս է: Ի՞նչ է մանուկը: Կարծեմ ամենաճշգրիտ և ամփոփ պատասխանը Տր. Պէթս կուտայ, երբ կըսէ. «Մանուկը կարելիութիւններով լեցուն արարած մըն է:» Ստոր վրայ Փրօֆ. Ճէյմսի խօսքը կրնանք աւելցնել, «Մանուկը արժէքաւոր բանիւր մի ամբարն է, որչափ որ փորեւս այնքան թանկազին բաներ կրնաս գտնել:» Անշուշտ փորելուն մէջ ալ վարպետութիւն պէտք է, քիչ մը անպատշաճութիւն օգտակար վայրը թոյն սփռող ափի մը կրնաս փոխել: Շատ մը խոհեմ ծնողաց, դասատուներուն և կարող քարոզիչներուն գրողարաններուն մէջ զլխաւոր տեղը կը գրաւեն մանկանց հոգեբանութեան մասին գրուած գիրքերը:

Լաւ կրթէ՝ մանուկը, և պիտի տեսնես թէ այն ինչէ՛ր կրնայ ընել. նայէ՛ր Գըլիլէօնի փողոցներուն մէջ իրենց յատուկ համապատասխան և քայլերով ամբողջ Ամերիկայի և աշխարհի ուշադրութիւնը իրենց վրայ գրաւող 18000 Զանաթրայ Ընկերութեան երիտասարդ անդամ և անդամուհիներուն, որոնք միաբերան կը գոչեն. «Մենք Բրիտանիաներ ենք, և ուրիշները Բրիտանիայ ընելու պիտի աշխատինք: Մենք պատերազմին դէմ կը բողոքենք, և անբարոյականութեան և արբեցողութեան դէմ կը պայքարինք:» Այս արդիւնքն է լաւ կրթութեան:

Այս ըսել է որ, պատիկները անանկ կըրթենք և անոնց կարելիութիւնները անանկ իմաստութեամբ գուրս հանենք, որ անոնք մեկմէ՛տ՝ ալ աւելի օգտակար ըլլան. և կարենան բողոքել մարդկութիւնը փտակեցնող ընկերային ախտերու դէմ:

Մենք զեռ հասկեցած չենք թէ ի՞նչ է մանուկը, և ինչպէս պէտք է կրթել զայն: Դըպրոցներուն մէջ զգաւալանին գոյութիւնը, վարժապետներու անվայել վարմունքը, հին սովորութեանց համեմատ գոտախարակութիւնը կը ցուցնեն թէ, դեռ նոր շարժման կենսատու

գեփիւռը մեր դպրոցներէն ներս փչաց չէ: Միշտ սով մը կ'ունենանք, այս պահուստ ալ մանկավարժ դասաւանդներու սովը ունինք:

Ընտանեկան կրթութիւնն ալ քաջալերական ըլլալէ շատ հեռու է: Հայր մը կ'ստիպէ որ իր տղան իր մօրը հայհոյէ, ծխէ, օգի խմէ: Ուրիշ մը կ'ըսէ «Ես օգի խմելու և ֆէյֆ ընելու ատեն եթէ իմ տղաս տանիքէն իշնալու և մեռնելու վտանգին մէջ խոկ գրտնաւի, ես իմ ֆէյֆիս կը նայիմ և բաժակը կը պարպիմ»: Ասոնք իրական գէպքեր են, որոնց ականատես կ'ըլլամ և արտանց կուլամ:

Մենք գիտենք թէ պոզպատը իր մէջ կայծեր կը պարունակէ, բայց գանոնք արտադրելու համար գայլախաղ մը պէտք է: Սիրելի ծնողք, աշխարհը բռնկեցնելու չափ սլոպսեղձ՝ բայց լալիան ու տկար մանուկ մը ունին գրկիդ մէջ, մի՛ արհամարհիր զայն, առնոր կայծերը արծաթածոգ ագգակ մը եղիր: Սիրելի՛ գասառու, առջեզ նստած բոպիկ և ցնցոտիներ հազած, մերկ ու անաթի որբը մի՛ ատեր այլ սիրով մօտեցիր անոր. խնդիրը, զիրքը գոց ընել տալ և լմնցնել չէ, այլ մտնու՛ կը կրթել:

Եղիպտոսի պեղումներու ատեն գերեզմանի մը մէջ պղտիկ տման մը գանուեցաւ, որ քանի մը ցորենի հատիկներ կը պարունակէր: Փորձելու համար այս ցորենը ցանեցին, բուսաւ և հատիկներով լեցուն հասկեր ունեցաւ: Այս գերեզմանը այդ հատիկներով 2000 տարինոց էր: Խնդրեմ, պղտիկներուն կարելիութիւնները գերեզմանի մէջ մի՛ պահէք, պղտիկ կաղնի մը մէջ խոշոր կաղնիի ծառ մը պահուած է. խոկ պէտք է զայն տնկել, ջրել և հոգ տանիլ, եթէ ոչ ա՛ն կը փափի ու կ'անհետանայ:

Պատիկը պէտք է մեծնայ բարձր գաղափարականով, երբ կը տեսնես որ այն իր կուրորութիւնը ցուցնելու կը ջանայ, մի՛ յուսահատեցնիր, այլ քաջալերէ գանիկա. «Գիտցիր որ դուն թագաւոր մըն ես», քսաւ Հելէնա թագուհին իր հինգ ու կէս տարեկան գաւկին երբ սա վերջինին իրր Ռեմանիոյ թագաւոր թագազրութեան հանդէսը կը կատարուէր:

Պատիկ Գօնրատ աշխարհադրութեան գասին մէջ իր մատը քարտէսին մի որսը մասին վրայ դրաւ և ըսաւ, «Ես հոս պիտի երթամ»: Եւ իրաւի վերջէն գնաց: Այս տեղն է Գօն-

կոն, Ափրիկէի խաւար երկիրը:

Պատիկ Գարրէկիօ, անգամ մը Ռաֆայէլին մէկ պատկերին առջեւ կեցաւ, ուշադրութեամբ դիտեց և վերջապէս բացականչեց, «Ես ալ նկարիչ մըն եմ»: Ապագային եղաւ նշանաւոր նկարիչ մը որուն մասին Իտալացի նշանաւոր Թիչեան ըսած է, «Եթէ ես Թիչեան ծնած չըլլայի, կ'ուզէի ծնած ըլլալ Գարրէկիօ մը»:

Մանուկը պէտք է բարձր գաղափարականով մը մեծնայ. Ուոլթ Հուիթման կ'ըսէ. «Ասկից վերջը ես գանձ մը որոնելու պէտք չունիմ, քանզի ես շատ լաւ գանձ մըն եմ»:

«Մենք մանուկներու կարողութեանց վրայ կարողութիւն չենք կրնար աւելցնել, բայց երբ կարողութիւնները կրնանք զարգացնել», ըսած է հոգեբան մը:

Մուտին անգամ մը իր ձեռքը Գնչուի մը զլխուն վրայ դնելով ըսաւ. «Աստուած քեզ մեծցնէ»: Այս խօսքը ուղղութիւն մը կուտայ Գնչուի կեանքին, որ կ'ըլլայ յայտնի աւետարանիչ, ձիփսի Սմիթ:

Ատաղծադորմ մը կ'ըսէ. «Կեանքին մէջ ամենահաճելի գէպքը այս է. երբոր երիտասարդ էի, խոնուութիւն մէջ աշխատելու ատեն տեսայ չորս մանուկներուն խաղալը, զործն ձգեցի և իրենց քովը երթալով թելադրեցի որ կիրականօրեայ Գարրոնը գան, եւ խօսք տուին թէ պիտի գան, եկան եւ շարունակեցին: Այն կրթութիւնն էր որ, անոնցմէ մին Հնդկաստանի մէջ մեծ մարդ մը, միւսը Ափրիկէի մէջ միսիօնար մը, մէկալը Ամերիկայի նախագահին զրազիրը, խոկ միւսը որ Հարօրինկ է, Ամերիկային նախագահը ըրաւ»:

Վերջապէս խնդիրը զաւակ ունենալ չէ, այլ զայն իմաստութեամբ կրթել է, որպէսզի ան ապագային օգտակար ըլլայ եկեղեցիին, ազգին և համայն մարդկութեան:

ՊԷՅՐՈՒԹ

ԵՆՈՎՎԻ ԿԵՕՔԿԵՕԶԵԱՆ

Երբ կարգ մը զործաւորներ եկեղեցիի մը տանիքին վրայ կ'աշխատէին, իրենցմէ մէկը յանկարծ դեռին ինկաւ: Ընկերները կարծեցին թէ ան մեռած պիտի գտնուի. բայց զարմացան երբ զայն անմիտ գտան: Խանութրը արածող գառնուկի մը վրան ինկած էր, որ թէպէտ ճմուռած էր բայց մարդը ապատած: Երախտագէտ մարդը գառնուկին պատկերը քանդակեց հոն ուսկից ինկած էր:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Տոքթ. Ուսյուրբեր, որ 1886 ին հիմնադիրներէն մէկն է «STUDENT MOVEMENT»-ի և երկար տարիներ Եւրոպայի և Ասիայ մէջ ուսանողներուն հետ շփում ունեցած է, իր Հալէպ այցելութեան առթիւ խօսեցաւ վերոյիշեալ նիւթին վրայ, որուն կարծիք մէկ ամփոփումը կուտանք ստորեւ:

Բոլոր երկիրներուն մէջ ուսանողները հասարակաց փափաքներ և միտումներ ունին: Անոնց մէջ տեսայ այլասիրութեան և լաւատեսութեան ոգի մը, խաղաղասիրական միտումները շատ զօրաւոր է իրենց մէջ. 200, 000 կազմակերպեալ ուսանողներ կ'առեն պատերազմը և պիտի ընեն իրենց: Կարելին խաղաղութիւնը հաստատելու: Անոնք կը փափաքին ներկայ ընկերային վիճակը բարեփոխել, և կրթութիւնը և ուսումը տարածել տմէն տեղ: Բայց, ըսաւ յարգելի խօսողը, բարձր իմացականութիւնը միայն չ'ապահովէ փափաքներու: Կ'ըն մեծ վտանգն է, ուսանողները պէտք է պայքարին փառ նկարագրի դէմ: Ահա ուսանողներու մէջ բարձր նկարագրի յառաջ քերելու համար հաստատուած է ուսանողական այս կազմակերպութիւնը Փրինսթըն Գոլէճի մէջ:

Յիսուս ինքը քրիստոնէութեան մեծագոյն պատգամն է: Ընդհանուր առմամբ անոր հակակիրներ շատ քիչ կան. անոր կեանքը հիացումի աւարկայ է:

Զինատանի մէջ յատուջ եկած Հակաքրիստոնէական Ընկերակցութիւնը շատ մը զրութիւններ ունի քրիստոնէական հաստատութիւններու և սոսաջնորդներու դէմ. բայց յօգուած մը միայն Յիսուսի դէմ և հատ մըն ալ Ս. Գրքի դէմ զրուած: Յիսուսի մարդկօրէն (MANLY) կեանքը մեծ ապաւորութիւն ձգած է անոնց վրայ. ան միշտ իր ժամանակին նախապաշարութեան դէմ ապրեցաւ և նոյն իսկ ան ստանձին մնալու յօժարեցաւ, երբ լոյրը լքեցին զինքը: Այրիները, ընկեցիկները, մանուկները իր կարեկցութեան տարակայ էին: Մանաւանդ Անոր նկարագրէն մաքրութիւնը հիանալի է: Բոլոր մեծ սուրբերու կեանքին մէջ մենք երկուստեան մը կը տեսնենք: Անգլիացի բանաստեղծ Լէմպ, յայտնի գրողներու հաւաքոյթի մը մէջ, Շէքսպիրի

և Յիսուսի մասին այսպէս արտայայտուեցաւ. «Եթէ Շէքսպիր յարուցիւն առնելով հոս դար, մենք ամէնքս ալ ի յարգանս մեծ բանաստեղծին ոտքի վրայ պիտի կայնէինք. բայց եթէ Յիսուս ներս մտնէր, անոր ոտքերուն վրայ պիտի իյնայինք զայն պաշտելու համար»:

Քրիստոնէութիւնը կը քննադատուի ուսանողներու կողմանէ իրր թէ ան գիտական չէ: Գիտութիւնը մեղի կը սորվեցնէ, կ'ըսեն անոնք, թէ յարմարագոյնը միայն կրնայ ապրիւ (SURVIVAL OF THE FITTEST). Իսկ Քրիստոնէութիւնը կը սորվեցնէ անյարմարին ապրումը: Բայց պէտք չէ մոռնանք որ Քրիստոնէութիւնը անյարմարը յարմարի կը փոխէ:

Թէ քրիստոնէութիւնը ի՞նչ կ'ընէ լաւ կը բացատրէ Զինացի նորագարձ քրիստոնէի մը աշխարհական պատմութիւնը իր կրօնական փորձառութեան մասին: «Զգիտական (AGNOSTIC) Բեռֆէստը մըն էի, կը պատմէ Զինացին, բայց միշտ կը պայքարէի իմ նկարագրիս ինկածութեան դէմ: Սյս կուրին մէջ յաղթուած ինկայ գուրի մը մէջ. Կոնֆիդիոս եկաւ, վարը նայեցաւ և ինծի ձայնեց. «Այս բարոյագիտական կանոնները ընդունէ և պիտի ազատիս: Քիչ վերջը Պուատան եկաւ և ինծի ըսաւ թէ ես կրնամ ազատիլ և վերելիլ, եթէ Լորանցնեմ իմ գիտակցութիւնս, անգլայանամ Նիքոմանայի մէջ, ժխտեմ լոյրը փափաքներս: Բայց ես միշտ գուրին մէջն էի: Վերջապէս Յիսուս եկաւ, մինչև հօրին յատակը իջաւ, ձէռքէս բռնեց և զիս վեր հանեց:» Ահա ուսանողները Յիսուսի այս փրկարար ներդրածութեան առարկայ պէտք է ըլլան:

Հօրմէնտ Պէնթլի անուն միսիօնար մը իր ընտանիքով կը ճամբորդէր վերին Գոնկոյի մէջ (Ափրիկէի մէջ գետ մը): Մարդակեր բընիկները թշնամական ոգի ցոյց տուին ըսելով, «Հեռացի՛ր»: Միսիօնարը անմիջապէս իր կնոջ ձայնեց որ պզտիկը զուրս հանէ և ցուցնէ անոնց: Տիկինը համակերպեցաւ. վայրենիները երբ ժպտող մանուկը տեսան իրենց արամազրութիւնը փոխեցին և մէկիկ մէկիկ դալով զրկեցին պզտիկը սիրելու համար «քանի որ այս ճերմակն ալ մանուկ մ'ունի, անոնք խորհեցան, ուրեմն ան ալ մեզի պէս մարդ է»: Եւ բարեկամացան: Մանուկին ժպտող թագաւորին խոժոռ դէմքէն աւելի զօրաւոր է:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Պէշտոյք . Մամէլթէյնի Հայ Թոքախաւորներու Հիւանդանոցին չորրորդ տարեկան տեղեկագրութենէն կը քաղենք : Հիւանդանոցը այս տարի ունեցած է 100 հիւանդներ, 1—60 տարեկան, 24ը անցեալ տարիէն և 76ը այս տարի ընդունուած . 16 հոգի բուժուած և 41ը մեռած : Ասոնք բնիկներն են Թուրքիոյ 44 տարբեր քաղաքներուն և գիւղերուն : Տարեկան հասոյթը եղած է 7516.48 Ս . Լ . Լիրա և ծախսուած է 7488.03 Ս . Լ . հասոյթին 3700.25 Ս . Լիրան ապահովուած է հայ բարեգործ անհատներէ և կազմակերպութիւններէ և մնացածը՝ օտար ազրիւրներէ : — Տիար Յովհաննէս Արզաբեան , որ Աթէնքի Սիւլ սոլ Բիլիմընի մէջ այս տարի աւարտեց իր ստանաժարանական ուսումը , Պէշտոթ եկած է հաստատելու համար Ե . Ք . Լնկերակցութիւն (Y.M.C.A) մը : Յաջորդութիւն կը մաղթենք :

Ս . Ժօզէֆ համալսարանը անփոխարինելի կ'ուրուստը կ'ունենայ յանձին Հ . Լուի Զէյքոյի , որ իր մահկանացուն կնքած է ամսոյս 8ին : Այս գիտնական կրօնականը մասնաւոր և բարձր գիրք մը գրած է Արաբ գրականութեան մէջ : Երկու տարի առաջ իր կրօնական կեանքին յորելեանին առթիւ՝ ամէն զասակարգէ և զազափարէ՝ բոլոր Արաբ գրողները անխտիր իրենց յարգանքը մատուցին այս արդիւնաշատ աշխատաւորին : Հանգուցեալը Խալամազիտութեան մէջ ալ մասնաւոր համբաւ մը չինած էր իրեն համար :

Տառապիւս . Վեր . Ն . Սարեան կը գրէ . « Տամաւկոսի հայ գաղթականները իրենց մեկուսացեալ գիրքին պատճառաւ շատ վնասուած են թէ տնտեսապէս և թէ բարոյապէս : Անոնք միշտ հետու մնացած են բարեհալ տնտեսութեան և ընկերութիւններու հետ շփում ունենալէ : Մանաւանդ վերջին զէպքերէն առգին մեր ժողովուրդը չէ վայելած պէտք եղած աջակցութիւնը և քաջալիրանքը : Այսպիսի պայմաններու տակ երկք տարիներէ ի վեր կը պահենք երկուեւ բարձր վարժարան մը հակառակ ամէն տեսակ զժտարութեանց . բայց սրուն զոյութիւնը ապահովելու համար պէտք ունինք բոլոր հաւատացեալներու ազօթքներուն և նիւթական աջակցութեան : »

Գրողք իման — Պէշտոթ . Պատ . Գ . Գրողքեա-

շարեան ներկայիս քարոզիչն է այս երկու գիւղաքաղաքներուն Հայ Աւետ . եկեղեցիներուն , շարաթ մը մէկուն մէջ և երկրորդ շարաթը միւսին մէջ զօրծելով : Գրողքիսանի զարոցին աշակերտութեան թիւն է 60 , իսկ Պէշտանինը՝ 22 , որոնցմէ մէկը Թրքուհի մըն է :

Հազարի Ազիզիյէ եկեղեցիին Ե . Ք . Զանից Միւթեան զատախօսական հաւաքոյթին մէջ Նոյ . 30ին խօսեցաւ Տօքթ . Ճ . Մէրիլ « Կրօնք և Դիտութիւն » նիւթին շուրջ , և ցուցոց թէ այս երկուքին միջև հակառակութիւն չկայ և չկրնար ըլլալ , հակառակութիւնը միայն մարդկային միտքին մէջ է :

Զեռնհատօրէն և ժողովրդային լեզուով Դեկ . 7 ին խօսեցաւ Տօքթ . Ճէպէճեան « Տարբարանական և Բնագիտութիւն մեր տուներուն մէջ » նիւթին վրայ :

Մանչեսթը Բարձրագոյն Վարժարանին մէջ Երկուշաբթի կէսօրէ վերջ Դեկտ . 12ին աշակերտները ունենդրեցին Տօքթ . Բէյալին , ուսումնաւարտ Պէշտոթի Ամերիկեան Բժշկական համալսարանէն . յարգելի բժիշկը խօսեցաւ « Լաւ Մուրիական քաղաքացիութիւն » նիւթին վերայ և շեշտեց սա կէտը թէ լաւ Մուրիական քաղաքացի մը լաւ կրթուած մարդն է , և ապա վերլուծեց լաւ կրթուած մարդու մը հինգ յատկանիշները : Դպրոցին նախագահին կողմանէ ուղղուած մասնաւոր հարցումներուն պատասխանելով Տօքթ . Բէյալին շարունակեց :

1 . « Ուսանողները ի՞նչպէս պէտք է պատրաստուին նկատի առնելով Սուրիոյ տնտեսական կարելիութիւնները : Սուրիա հինէն ի վեր վաճառականներու երկիրը եղած է , պատեւրազմէն առդին ստեղծուած քաղաքական պայմանները առ այժմ Սուրիոյ վաճառականութեան մեծ վնաս տուած են : Միեւնոյն առեւ Սուրիան իր ճարտարապետական երկիր նախանձելի գիրք մը չի կրնար գրաւել , քանզի գուրկէ բնական հարստութիւններէ , հանքերէ և անտառներէ : Հողագործութեան պէտք է դարկ տալ :

2 . Ներկայ ընկերային զոյափիճակին մասին խօսելով ըստ թէ ան պէտք չէ և չի կրնար տեսական ըլլալ , քանզի բնական վիճակ չի ներկայացներ այն բնակչութիւն , որ միութիւն չէ կազմած , այլ տարբեր ընկերային բաժանումներէ բաղկացած է :

ՔՐԻՍՏՈՆԵՍՏԻԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հնդկաստան 320 միլիոն բնակչութեամբ մեծ երկիր մըն է, ուր կը գործածուին գանազան լեզուներ, բազմազան ցեղերու և համայնքներու կողմանէ և ուր կը գտնուին այլազան կրօններ:

Շատ դարեր առաջ Քրիստոնէութիւնը Ասորի Միսիոնարներու միջոցաւ Հնդկաստան մուտ գործած էր. և հիմա հոն՝ Մալապարի մէջ 400,000-ի մօտ Քրիստոնէայ ժողովուրդ մը կայ Յակոբիկեան եկեղեցիին հովանիին տակ:

ԺԸ. Դարուն մէջ աւետարանական նոր գործունէութիւն մը սկսաւ և 1715-ին Նորկասկարանը թարգմանուեցաւ հնդկի տեղական լեզուներէն թամիլերէն:

Բայց Քրիստոնէութիւնը սկսաւ զօրաւոր կերպով թափանցել Հնդկի աշխարհին մէջ երբ ԺԹ դարուն սկիզբը Ուիլիամ Քէրի և իր աշխատակիցները Ս. Գրքը թարգմանեցին երեսուն տարբեր լեզուներու. իսկ հիմայ Ս. Գրքը 101 Հնդկի բարբառներով ամէն գասակարգէ ժողովուրդին մատչելի եղած է:

Քրիստոնէութիւնը Ս. Գրքի միջոցաւ աւելի լաւ պիտի տարածուէր եթէ անգրագէտներու թիւը մեծ չէր ըլլար. Հնդկի ժողովուրդին հազիւ տասներ ութէն մէկը կրնայ գրել կարդալ: Երկու և մէկ քառորդ դարի աշխատանքներուն իր արդիւնք 4775 000 Քրիստոնէութիւն մը կայ, որ ամբողջ բնակչութեան մէկ վաթսուն եօթերորդը կը կազմէ: Քրիստոնէութիւնը աւելի վարի գասակարգէ մարդոց կողմանէ ընդգրկուած է քան թէ իրենք գիրենք բարձր գասակարգէ նկատող մարդերու կողմանէ: Վերջինները հազիւ մէկ տասներորդը կը կազմեն Հնդկի Քրիստոնէաներուն: Հնդկի մը անգամ մը գիտել տուաւ Սատու Սունասար Սինկհի թէ քանի որ աւելածունները միայն կ'ընդունին Քրիստոնէութիւնը, ուրեմն ան անկասկած միայն անոնց յարմար կրօնք մ'է: Սատու անոր յիշեց հընդիկ այն գաղափարը որուն համեմատ ստորին մարդերը Արարիչին մարմինին վերի մասերէն և ապա բոսաւ. «Մարմինը կը հետեի ոտքերուն և այսօր իրաւամբ այս արհամարհուած ժողովուրդը վերի գասակարգերը Քրիստոնէութեան շահելու մէջ եռանդուն գործունէութիւն մը ունի»:

Բայց ի՞նչ եղած է Քրիստոնէութեան ազդեցութիւնը Հնդկաստանի մէջ:

Հնդկի գրականութիւնը մեծ զարկ ստացած է Ս. գրքի այդ լեզուով թարգմանութեանէն վերջ: Պենկալերէնը, որ 50,000 ժողովուրդի լեզուն է, մեծ բան կը պարտի Ու. Քէրիի, որուն շնորհիւ այս բարբառը գրական լեզու մը դարձաւ, և որով թափոր, Հնդկի աշխարհահռչակ բանաստեղծը, իր հանճարին ջոլքերը կ'արտասփռէ այսօր:

Մեծ հնդկի սոսանորդները մեծապէս ազդեցած են Նոր Կտակարանէն և Քրիստոսի կեանքէն: Թափոր, թէպէտ Քրիստոնէայ չէ, իր զպրօցի աշակերտներուն երգել կուտայ այնպիսի երգեր որոնք Քրիստոնէական են իրենց ոգիով: Մահաթմա Կանտի, մեծ ազդայնական սոսանորդը, նոյնպէս ոչ-Քրիստոնէայ, հիաշողն է Յիսուսի: Ան անգամ մը ըսաւ. «Շատ անգամներ վարանած եմ թէ որ ուղղութեան պիտի հետեւիմ, և անմիջապէս գիտած եմ Ս. գրքի, մանաւանդ Նոր Կտակարանի, և անոր պատգամէն նոր ոյժ ըստացած եմ»: Ուսանողները, Հնդկի Ազգային Գօլէճին մէջ, Կանտիէն պահանջեցին որ իրենց գասախօսութիւն մը ընէ Նոր Կտակարանի վրայ: Պէտք չէ մոռնալ որ Կանտի ներկայիս է՝ն ազդեցիկ գեմքերէն մէկն է Հնդկաստանի մէջ:

Բայց Քրիստոնէութեան ազդեցութիւնը այսօր զգալի է նաեւ Հնդկի տարբեր կրօններու մէջ: Նոր կրօնական գրութիւններ և հասարակութիւններ կ'ստեղծուին, որոնք իրենց վարդապետութիւններուն մէջ կը կրեն խորունկ Քրիստոնէական զիմեր: Հնդկաստանի կրօնքները, պահելով իրենց անունները, կը քրիստոնէանան. հին հեթանոսական գաղափարները և ընկերային սովորութիւնները տեղի կուտան աւետարանական լոյսին առջեւ. կոտակաշտութիւնը իր ոյժը կորսնցուցած է: «Անցեալ սերունդը կ'աշխատէր չուցնելու թէ Հնդկի ազգային կրօնքը կը գերազանցէ Քրիստոնէութիւնը, իսկ ներկայ սերունդը կը ջանայ հաստատելու թէ ան Քրիստոնէութեան չափ լաւ է»:

Հնդկի Իսլամներու մէջ ծագում տուած է Ահմէտիյէ անունով նոր շարժում մը, որ քրիստոնէական շատ մը գաղափարներ և վարդապետութիւններ ընդգրկած է, պնդելով թէ

անոնք զուտ Իսլամական են:

Արդեօք պիտի գա՞յ ատեն մը, երբ ներկայ կենդանի կրօնքներէն մէկը, աւելի ճիշդը կրօնքի արտայայտութիւններէն մէկը տիեզերական, համամարդկային պիտի ըլլայ, թէ ոչ նոյն կրօնքը պիտի արտայայտուի, տարբեր անուններու և ձևերու տակ, միացնելով բոլոր մարդկութիւնը: Արդեօք պիտի գա՞յ ատեն մը, երբ բոլոր մարդիկ պիտի կոչուին Աստուծոյ զաւակներ, պատկանելով տարբեր կրօնքներու, բայց զերծ խմբակցական անունի մը սեղմումներէն:

Ա.ԶԱՏ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍ

ՅԻՍՈՒՍԻ ՄԵՆՈՒՆԴԸ

Դիկ. 25.

Արեւելեան և արեւմտեան եկեղեցիները համաձայնած են թէ ո՛ր կիրակին պէտք է տօնել Զատիկը. բայց Մենունդի տօնի թուակառնին մասին չեն կրցած համաձայնութիւն գոյացնել: Արեւմտեան եկեղեցիները Դիկ. 25ին կը տօնեն Մենունդը, որ այս տարի կիրակին կը հանդիպի. հետեւաբար մեր դասին նիւթը պիտի ըլլայ Քրիստոսի Մենունդը:

Մարկոս և Յովհաննէս չեն գրեր իրենց աւետարաններուն մէջ Քրիստոսի Մենունդին մասին: Մաղթկոս կը նկարագրէ Յիսուսի Մենունդը Բեթլեհէմի մէջ և դէպքերը Յովսէփի տեսակէտին համեմատ կը պատմէ: Իսկ Դուռկոս, որուն նպատակն էր ամէն բան կարգով պատմել իրենց սկզբնաւորութենէն սկսեալ, անուշ, արժէքաւոր և միայն նեղ չըջանակի մէջ ծանօթ իր տեղեկութիւնները ողջ մնացած Մարիամէն քաղելով կը գրէ:

1. Նաւապրեցի Յիսուս Բեթլեհէմի մէջ ծնաւ Աստուծոյ կամքը կատարելու «բոլոր» աշխարհի կայսեր՝ Օգոստոսի՝ ճիշդ ժամանակին տուած հրամանովը: Բայց Բեթլեհէմի մէջ ծնած մանուկը Նաւապրեցի եղաւ. քանզի զահի թեկնածու ըլլալ վտանգաւոր էր, եւ պէտք էր ծառուկ տեղ իր երիտասարդութիւնը անցնել:

Շատ օգտակար է ուսումնասիրել Յիսուսի կեանքին մէջ նախախնամութեան կատարած դէպքերը. Դուկ. 2. 1-6. Յովհ. 19. 19-23 և 31-39. Մատթ. 15, 37 և 42-46:

2. Պանդոկի մէջ տեղ չգտնելը միշտ ալ իմաստալից երեւցած է եկեղեցիին: Յիսուս է՛ն հարուստ տան մէջ տեղ պիտի գտնէր հիթ մարդիկ պիտնային թէ ծնանելիք մանուկը Միսիտ պիտի ըլլար: Բայց չգիտցան, եւ Յովսէփի արքայական ընտանիքէ սերած ըլլալը աննկատելի մնաց: Ո՞վ կրնար երեւակայել թէ Միսիտն Բեթլեհէմի մէջ պիտի ծնի, մինչ ամէն մին իր զործով կ'զբաղէր: Ուստի ախտէն զատ տեղ մը չկրցան ապաստան գտնել: Մեր դիրքը ի՞նչ է այս Միսիտային հանդէպ: Մեր գրադած միջոցին անոր մասին կը խորհի՞նք:

3. Զօրաւոր հոտանքներ կան որոնք կը միտին հոգեւոր փորձառութիւնը մոռցնել և արժէքը կորսնցնել. քանի ժամանակը կը յատկանայ անոր ազդեցութիւնն ալ ա՛յնչափ կը տկարանայ: Մարիամ զանոնք պահեց իր մաքին մէջ: Կարելի է հովիւները իրմէ նուազ ազդեցան: Միւս լուղներուն վրայ արդարաւորութիւնը աւելի տկար եղած պէտք է ըլլայ: Մեր ունեցած պատմութիւնը Մարիամինը կրնայ ըլլալ: Երանի այն մարդուն որ իր հոգեւոր փորձառութեանց ապաւորութիւնը չկորսնցուցած կրնայ փոխանցել զայն ուրիշներուն:

4. Փառք Աստուծոյ, խաղաղութիւն մարդոց. Աստուած իր խոստումը կատարելու վրայ էր: Իր խաղաղութիւնը որո՞նց համար էր: Երեք պատասխաններ կրնան տրուիլ. 1) ամէնուն համար, 2) որուն որ ինքը կը կամի, 3) անոնց համար որոնք բարի կամք ունին. բնազիրը կը ցուցնէ թէ վերջինը չիտակ է:

5. Երթանք, տեսնենք... երբ տեսան ուրիշներուն լուր տուին: Մենունդի աւետիսը անձէ անձ փոխանցուելով պիտի լեցնէ բոլոր աշխարհը: Ան քեզի հասած է: Բայց եթէ լուր տուողներու շղթան քու միջոցաւ վերջանայ կամ կտրի՝ պատասխանատուութեան տակ պիտի մնաս:

6. Մենք չենք կրնար Մենունդի իմաստը հասկցած ըլլալ, հիթ անոր մէջ միայն մանուկի մը աշխարհ զալը կամ Միսիտայի մը երեւնալը կը տեսնենք: «Բայց երբ ժամանակը լեցուեցաւ, զրկեց Աստուած իր որդին.» Դաւ. 4.4: «մանը մարմին եղաւ:» Յովհ. 1.14:

— 12431 —

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

Համերակ Սուրբ Գրքին 5.

Իսրայէլի թագաւորական Տեսանողն եմ,
անրենս եօթը գիրով կը գրուի. —

Որուն 4. 4. 5. 6. թէ ամական թէ զոյական

եղող բառ մըն է:

» 4. 5. զործիք մըն է:

» 7. 5. 6. Հայ գիրերէն մին:

» 5. 6. 4. զոյգմը ոչինչներ:

» 7. 3. 6. 4. ամեն բան անով եղաւ:

» 2. 1. ո՛չ կենդանի, ո՛չ մարդ, ո՛չ Աս-
տուած, ի՛նչ է անունս և Սր. Գրոց
սրտեղը յիշուած է:Թիւ 2, 3, 4, հանելուկները անտխալ լուս-
ծողներն են. —

1. Չաւէն Բուպեան
2. Բիւզանդ Ինկիլիզեան
3. Լուսին Պաւեօղեան
4. Բիւզանդ Մաթթեան
5. Իսկէնաէր » »
6. Լեւոն Կ. Պապիկեան
7. Լիւթա Արըճեան
8. » Փօլտաեան
9. Էլիզ Սուրօզլեան
10. Էֆրեմիա Այնիլեան
11. Լուսին Գաւաթանուկեան
12. Լուլու Կ. Յարութիւնեան
13. Թորոս Լուխաճեան
14. Կիւլէնեա Գունտաղճեան
15. Սուրէն Լ. Չամբէան
16. Սարգիս Գալֆաեան
17. Պէրնարտ Յ. Գալֆաեան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Կոչ Աղօրի

ԾՕԴՈՒԱԾՆԵՐ

Մասալ Անուկը կաւ Մեր Պանուած Գանձերը
ՊԱՏ. Ե. ԿԷՕԲԿԷՕԶԵԱՆՈւսանողական Շարժումներ. ՏՐ. ՈՒԱՅԼՏԸՐ
Բրիտանիոյ շէնքի մէջ. ԱԶԱՏ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. ԴՊՐՈՑԻ ԴԱՍ

ՄԱՆԿԱՆՑ ԷԶԸ

18. Ճօրճ Ալէմեան

Նուէրը՝ վիճակով՝ արուեստ Զաւէն
Բուպեանի:

Ամերիկացի միսիօնար մը կը ճամբորդիր
Սուրբ Երկրին մէջ: Երբ Այն Քէրիմ կոչուած
գիւղը հասաւ, որուն համար կ'ըսեն թէ Յով-
հանէս Մկրտիչի Մենդաժայրն է, 12 տարեա-
կուն տղայ մը վաղելով եկաւ և խնդրեց իրմէն
որպէս զի ինքը տանի միսիօնարին ձեռքի պա-
յուսակը: Միսիօնարը կարծելով թէ փոքր
«պախչիչ»ի մը համար էր, տուաւ պայուսակը,
որ տղան տանի: Ճամբան հասկցաւ որ այս
տղան ուրիշ Ամերիկացիէ մը քիչ մը Ան գլի-
երէն սորված ըլլալուն համար չափ կը սիրէր
Ամերիկացիները:

Երբ հասաւ ուր որ կ'երթային, միսիօնա-
րը իբր վարձատրութիւն երկու դահեկան եր-
կնցուց տղուն: Սակայն տղան իր գլուխը
չարժեց ըսելով. «Ես զրամի համար չըրի ա-
սիկա, ես արդէն երախտապարտ եմ Ձեզի.
մնաք բարով», ու մեկնեցաւ:

Հարցում. — Երբ քու օգնութեանդ կարօտ
եղողի մը հանդիպիս, ի՞նչ կ'ընես: Երբ մէ-
կու մը փոքր օգնութիւն մը կամ բարիք մը
ընես, ի՞նչ ակնկալութեամբ կ'ընես զայն:
Դուն քեզի կանոն ըրա՞մ ես ասեմ օր զոմե մեկ
անգամ բարիք մը գործելը: Աշխարհիս շատ մը
երկրներուն մէջ Պոյ-Սաուք կոչուած կաղ-
մակերպութիւն մը կայ, ասոնք տղոցմէ բաղ-
կացած են, և իրենց յատուկ կանոններ ունին:
Այդ կանոններէն մին է ամեն օր զոմե մէկ հոգ-
ւոյ մը բարիք ընել, մեծ կամ փոքր տարե-
րութիւն չընել: Դուն ալ ասանկ ըրէ:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կրօնարարոյական, Գիտական, Կրթա-
կան երկշարաթերթ:Արտօնատէր, Վեր. Կ. Յարութիւնեան
Պատասխանատու-Տնօրէն, Տ. Ճ. Խըրլորեան
ԲՍԺԱՆՈՐԴԱԳԻՆՍուրիոյ համար տարեկան 2 մլճիտ
Արտատահման » » 1 տուար

Հասցէ. —

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287
ALEP, SYRIE